

Հաստատված է համալսարանի գիտական խորհրդի

2023թ. ~~հոկտեմբերի 23-րդ~~ թիվ նիստում

գիտական խորհրդի նախագահ

Արթուր Գևորգյան



**ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

1. Ուսանողների մանկավարժական պրակտիկայի արդյունքների պաշտպանության ընթացակարգը սահմանում է ՀՊՄՀ-ում ուսանողների մանկավարժական պրակտիկայի արդյունքների գնահատումը:

2. Ուսանողների մանկավարժական պրակտիկայի արդյունքների պաշտպանության ընթացակարգի ներդրումը նպատակ ունի բարելավել պրակտիկայի ընթացքում սովորողների ձեռք բերած կարողությունների գնահատման, դրանց շարունակական զարգացման գործընթացները:

3. Մանկավարժական պրակտիկայի յուրաքանչյուր շրջափուլ ավարտվում է պրակտիկայի արդյունքների պաշտպանությամբ:

4. Պրակտիկայի պաշտպանության հանձնաժողովի կազմը հաստատում է ղեկտորը՝ դեկանի ներկայացմամբ:

ա) Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են կրթական ծրագրի պրակտիկայի ղեկավարը, պրակտիկայի տվյալ խմբի մեթոդիստը, դեկանը (կամ դեկանի տեղակալը):

բ) Հանձնաժողովի կազմում կարող է ընդգրկվել նաև պրակտիկայի հիմնարկի մեկ ներկայացուցիչ:

գ) Հանձնաժողովը, ուսումնասիրում է պրակտիկայի հաշվետվությունը, ուսումնասիրում է պրակտիկայի թղթապանակը և ներկայացված փաստաթղթերը, ղեկավարի և/կամ ղեկավարների գնահատականները (պրակտիկայի օրագիր, բնութագրեր, դիտարկման արձանագրություններ, դասի կամ մասնագիտական գործունեության տեսանկարահանման ֆայլեր և այլն) որոնք սահմանվում են պրակտիկայի թղթապանակի ընթացակարգով և այլ փաստաթղթերով:

դ) Հանձնաժողովի նիստը նախագահում է կրթական ծրագրի պրակտիկայի ղեկավարը:

5. Պրակտիկային հատկացված ժամաքանակի 50% բացակայություն ունեցող ուսանողները չեն թույլատրվում պաշտպանության:

6. Հանձնաժողովի նիստին ուսանողը համառոտ զեկույցի ձևով ներկայացնում է պրակտիկայի ընթացքում իր կողմից կատարված աշխատանքները: Հանձնաժողովը պրակտիկանտին կարող է ուղղել հարցեր՝ պարզելու համար նրա կողմից ներկայացված փաստերի հավաստիությունը և ձեռքբերված կարողությունների մակարդակը: Պրակտիկանտի բանավոր զեկույցում առնվազն մեկ մասնագիտական իրավիճակի և մասնագիտական գործունեության դրվագի (դասի, արտադասարանական միջոցառման) ներկայացումն ու վերլուծությունը պարտադիր են:

7. Պաշտպանության ընթացքում յուրաքանչյուր պրակտիկանտի համար լրացվում է արձանագրություն (հավելված 1), որտեղ գրանցվում է պրակտիկայի վերջնական գնահատականը: Պրակտիկայի արդյունքների պաշտպանությունը գնահատվում է 100 միավորային համակարգով՝ համալսարանում ընդունված գնահատման կարգին համապատասխան՝ հիմք ընդունելով առարկայական նկարագրերով մանկավարժական պրակտիկայի տվյալ շրջափուլի համար սահմանված ակնկալվող կրթական վերջնարդյունքները, զեկույցում և հաշվետվությունում արտացոլված փաստերի հավաստիությունը և համապատասխանությունը պրակտիկայի տվյալ փուլի նպատակներին:

8. Պրակտիկայի արդյունքների գնահատականի հետ անհամաձայնության դեպքում ուսանողը կարող է այն բողոքարկել բողոքարկման հանձնաժողովին: Բողոքարկման հանձնաժողովի անդամներ են հանդիսանում պաշտպանության հանձնաժողովի անդամները, տվյալ մասնագիտությունը սպասարկող ամբիոնի վարիչը և համալսարանի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը: Բողոքարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը և լսելով ուսանողի զեկույցն ու մեկնաբանությունները, կայացնում է որոշում գնահատականի փոփոխության կամ այնփոփոխ թողնելու վերաբերյալ: Բողոքարկման հանձնաժողովի նիստը արձանագրվում է:

9. Պրակտիկայի արդյունքների վերջնական գնահատումն իրականացվում է հետևյալ չափանիշներով և համապատասխան գնահատման բաղադրիչների հանրամգումարով՝

ա) Առաջին բաղադրիչ՝ մասնակցություն և ակտիվություն, որի համար սահմանվում է 25% կշիռ և գնահատվում է տվյալ պրակտիկայի խմբի մեթոդիստի կողմից պրակտիկայի հաճախումների թերթիկի, պրակտիկայի օրագրի և պրակտիկայի ընթացքում ուսանողի ցուցաբերած ակտիվության հիման վրա-

բ) երկրորդ բաղադրիչ՝ **գործնական կարողություններ**, որի համար սահմանվում է 25% գնահատման կշիռ և գնահատվում է պրակտիկայի ընթացքում դրսևորած ուսանողի այն կոմպետենցիաների հիման վրա, որոնք սահմանված են կրթական վերջնարդյունքներով,

գ) երրորդ բաղադրիչ՝ **համագործակցային կարողություններ**, որի համար սահմանվում է 10% գնահատման կշիռ և գնահատվում է պրակտիկայի հիմնարկի կողմից տրված բնութագրի և հիմնարկի ներկայացուցիչների ու շահակիցների հետ համագործակցության ու կրթական վերջնարդյունքների հիման վրա

դ) չորրորդ բաղադրիչ՝ **թղթապանակի պաշտպանություն**, որի համար սահմանվում է 40 % գնահատման կշիռ և գնահատվում է պրակտիկայի ավարտին կազմակերպված թղթապանակի պաշտպանության միջոցով, պրակտիկայի արդյունքների ամփոփ ներկայացման հիման վրա:

10. Պրակտիկայի արդյունքների գնահատման բաղադրիչները և դրանց համապատասխան չափանիշները սահմանվում են համապատասխան առարկայական նկարագրերով: Եթե տվյալ պրակտիկայի շրջափուլում բացի պրակտիկայի մեթոդիստից, որպես խորհրդատուներ ներգրավված են նաև այլ մասնագետներ /մանկավարժ, հոգեբան/, ապա գնահատման կշռի ձևավորման ընթացքում նրանց կողմից առաջարկվող գնահատականը նույնպես պետք է հաշվի առնվի վերջնական գնահատման ժամանակ:

11. Պրակտիկայի արդյունքների պաշտպանության արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները: Արձանագրությունը պահպանվում է ֆակուլտետի դեկանատում (ուսանողի անձնական գործում), որը և տալիս է տեղեկանք պաշտպանության մասին: Պրակտիկայի արդյունքները չպաշտպանելու դեպքում ուսանողը կարող է այն հանձնել հաջորդ լուծարային շրջանում:

12. Մանկավարժական պրակտիկայի բոլոր շրջափուլերի ավարտին ֆակուլտետի կողմից հաշվարկվում է մանկավարժական պրակտիկայի միջին արդյունարար գնահատական: Միջին արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես մանկավարժական պրակտիկայի բոլոր շրջափուլում վաստակած միավորների միջին թվաբանական:

13. Պրակտիկայի միջին արդյունարար գնահատականը փոխանցվում է ակադեմիական տեղեկագիր:

14. Սույն ընթացակարգը հաստատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարում է ՀՊՄՀ գիտական խորհուրդը:

Հավելված №1
ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ֆակուլտետ
մասնագիտություն

Արձանագրություն № _____

Մանկավարժական պրակտիկայի արդյունքների պաշտպանության
Պրակտիկայի անվանումը՝ _____ ”
“ ” _____ 200 թ.

Մանկավարժական պրակտիկայի արդյունքների պաշտպանության

_____ (ուսանողի կուրսը, ուսուցման ձևը, պրակտիկայի հրամանի №, ազգանուն, անունը, հայրանունը)

Ուսանողի զեկույցի համառոտ նկարագիր:

Լրացուցիչ հարցեր:

Գնահատական _____

Հանձնաժողովի նախագահ _____

ստորագրություն (Ա.Ա.Հ)

Անդամներ:

ստորագրություն (Ա.Ա.Հ)

ստորագրություն (Ա.Ա.Հ)

ստորագրություն (Ա.Ա.Հ)